

Զ Ե Կ Ո Յ Յ

Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե ԱՆ

ՄԵԼԳՈՆԵԱՆ ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ. — ՆՊԱՍՏՆԵՐ. — ՆԵՐԳԱՂԹ. —

1. — Ազգային Բարերար Ազա Կարապետ Մելգոնեանի մահուամբ դադրած ընթացող կենսաթոշակը զոր ըստ պայմանագրության Միութիւնը իրեն կը վճարէր, բաղմազան զիմուններ կը կատարուին այս միջոցիս, այն ակնկալութեամբ որ այդ գումարը այլեւս արամագրելի է, որով և կարելի է գոհացում տալ ներկայացուած նպաստի առաջարկներուն:

Դժբախտաբար լրիւ չէ ըմբռնուած Մելգոնեան նուիրատուութեան իսկական քանակը, այսինքն կը կարծուի թէ առանձնապատուկ հիմնադրամ մըն է ան, Միութեանս զանազան հիմնադրամներուն նման, որուն եկամուտները կը արամագրուին ու ընդ նպատակներու. մինչդեռ այդ նուիրատուութեան աքղով Միութիւնը ստանձնած է պարտադիր յանձնառութիւններ, զոր ստիպուած է յարգել, ինչ որ ալ ըլլան եկամուտները. հետեւաբար, օրինապէս արտօնուած չենք թեւէ փոփոխութիւն մտցնելու եկամուտները. այլ ամէն պարագայի տակ պարտինք հաւատարմօրէն զործարել անոր իւրաքանչիւր արամագրութիւնը:

Միւս կողմէ, պէտք չէ նաեւ ուշադրութիւնէ վերացնել որ տնտեսական համալսարհային անօրինակ տաղնապին հետեւանքով բոլոր եկամուտները հարկադրաբար զգալի նուազում կրած ըլլալով, նիւթապէս ալ ի վիճակի չենք գոհացում տալու վերջերս մեզի ուղղուած խնդրանքներուն, երբ քաջայայտ իրողութիւն է այսօր որ Մելգոնեան Թրքմէի եկամուտները հազիւ պիտի բաւեն պարտադիր յատկացումներուն, այնպէս որ կարող չենք նոր յանձնառութեանց տակ մտնել, նպաստի վարկեր տրամադրելով, առանց խանգարելու Միութեանս եկամտական հաւասարակշռութիւնը, զոր կեդր. վարչ. Ժողովը այնքան բծախնդիր ուշադրութեամբ կը ջանայ պահել, ներկայ անգոհալից շրջանին դժուարութեանց հակառակ:

Երբոր տնտեսական պայմանները բարեփոխուին և մեր եկամուտները վերստանան իրենց նախկին կարեւորութիւնը, այն ատեն միայն կեդր. վարչ. Ժողովը պիտի ջանայ զործարել նաեւ այն ցանկութիւնները ևս զոր ոգրացեալ Բարերարը, առանց պարտադրումի, յայտարարած է նուիրատուութեան աքղին մէջ, յօդուտ մշակութային ձեռնարկներու:

2. — Կեդր. վարչ. Ժողովը նկատի առնելով օղնութեան զանազան խնդրանքները որ իրեն ուղղուած էին, որոշեց հետեւեալ անմիջական նպաստները յատկացնել, իր ընդհանուր հասցիներէն. —

- | | |
|---|-------------|
| Յօգուտ Պէյրութի և Հալէպի գործադուրկ կարօտեալներուն | Ա. Ոսկի 120 |
| Յօգուտ Գայա-Բունարի (Քէսասպ) Լէքսիուսեան Որբանոցին (Կիլիկիոյ վեհ. Կաթողիկոսին միջոցաւ) | Ա. Ոսկի 50 |
| Գահիրէի Հայ Կաթ. նորահաստատ վարժարանին նախնական ծախքերուն համար (Արհ. Նեսիմեան Գերապայծառի միջոցաւ) | Ա. Ոսկի 40 |
| Բարիդի կարօտ մտաւորականներու և ուսանողներու համար (Ազգատախնամ Ընկ. միջոցաւ) | Ֆրանք 5000 |

Նոյնպէս յօդուտ Յաւաստանի և այլ երկիրներու Իզմիրցի կարօտեալներու յատկացուած է ոգր. Մարգար Միրզայի կտակին համաձայն Միութեանս յանձնուած գումարը Ֆր. 30723:

3. — Երեւանէն հաղորդուած հաւաստի տեղեկութեանց համաձայն, Կառավարութիւնը որոշած է յանձնել այս տարուան ընթացքին վերստին ձեռնարկել Հայաստանի ներգաղթի գործադրութեանց, երբ բաւարար ընկարաններ ապահովուած պիտի ըլլան, ԴԻԻԱՆ

Բարիկ, 22 Հոկտեմբեր 1934

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ